

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բարսյանի, Ստեփան Ասլանյանի, Մկրտիչ Մինասյանի, Կարեն Ավագյանի, Արծրունի Աղաջանյանի, Հեղինե Բիշարյանի և Խաչիկ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

#### 1. 2-րդ հոդվածի՝

##### 1) 1-ին մասում անհրաժեշտ է՝

ա. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով,

բ. «սեփականության ձևից» բառերը փոխարինել «կազմակերպական-իրավական ձևից» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջները.

2) առաջարկում ենք հանել 2-րդ պարբերության 2-րդ մասը, քանի որ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի գործունեությունը կանոնակարգված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով.

3) առաջարկում ենք չորրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործում կարող են մասնակցություն ունենալ ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները), բարեգործները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա և միջազգային բարեգործական կազմակերպությունները):»:

2. 3-րդ հոդվածի՝

1) «ա» կետում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները.

2) «բ» կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ թե ապահովում, այլ մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը.

3) «թ» ենթակետը, նկատի ունենալով նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «պետական» բառից հետո լրացնել «նպատակային» բառով.

4) «ժ» կետը խմբագրման կարիք ունի, քանի որ «ՄԻԱՎ վարակի հայտնաբերման մատչելիություն» հասկացությունը հստակ չէ:

3. 4-րդ հոդվածի տեքստը չի համապատասխանում հոդվածի վերնագրին, քանի որ վերջինս նշում է միայն ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման ֆինանսավորման մասին: Միաժամանակ հայտնում ենք, որ հոդվածի վերնագիրը նախատեսում է ծրագրի, այլ ոչ թե «սոցիալական պաշտպանվածության ֆինանսավորում», ինչպես նշված է տեքստում: Դիտողությունը բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ

հողվածի պահանջից, ըստ որի իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին:

**4. 6-րդ հոդվածում նշված 8-րդ հոդվածի վերնագիրը չի համապատասխանում հողվածի բովանդակությանը, քանի որ վերնագրում նշվում է «բուժման» մասին, մինչդեռ տեքստում խոսքը բուժման նպատակով Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու մասին է: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **40-րդ հոդվածի պահանջները:****

Միաժամանակ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետություն կարգավորվում է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**5. 7-րդ հոդվածի՝**

**1) առաջին պարբերությունում «մասով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասերով» բառով, իսկ «խմբագրությամբ» բառը՝ «բովանդակությամբ» բառով.**

**2) 3-րդ պարբերությունում՝**

**ա. «դեռահասների» բառն անհրաժեշտ է փոխարինել «երեխաների» բառով, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները,**

**բ. հստակեցման կարիք ունի, թե ինչ «օրենքով նախատեսված դեպքերի» մասին է խոսքը,**

**գ. պարզ չէ, թե «դիմումը կամ համաձայնությունն» ինչ կարգով են տրվելու,**

**դ. անհրաժեշտ է նախատեսել **14-18** տարեկան դեռահասների, իրենց համաձայնությամբ, ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություն անցկացնելու իրավունքը:**

**6. 8-րդ հոդվածով նախատեսված **11-րդ հոդվածի** նոր խմբագրությունում առաջարկում ենք՝**

**1) թողնել գործող օրենքով պարտադիր բժշկական հետազոտության ենթակա «աշխատանքի բերումով արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների և օրգանների հետ առնչվող բուժաշխատողներ» կատեգորիան՝ նկատի ունենալով նրանց աշխատանքային գործունեության մեջ ռիսկի չափազանց բարձր աստիճանը և դրանից բխող վտանգները.**

**2) 1-ին մասի «բ» կետը տեղափոխել նույն հոդվածի **2-րդ** մաս, քանի որ հղի կանանց ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն պարտադրելը չի բխում «Բնակչության բժշկական օգ-**

նության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի «ե» կետի պահանջներից:

7. 11-րդ հոդվածում «պարբերության» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջին տեղակալ Հայկ Դարբինյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-398-02.12.2008-ԱՌ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1997 թվականի փետրվարի 3, ՀՕ-103) (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

*Մարդու իմունային անբավարարության վիրուս* (այսուհետեւ՝ ՄԻԱՎ)՝ վիրուս, որը ախտահարում է մարդու իմունային համակարգը եւ հանգեցնում իմունային անբավարարության համախտանիշի առաջացմանն ու զարգացմանը:

ՄԻԱՎ-վարակ՝ երկարատեւ ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն, որի հարուցիչը ՄԻԱՎ-ն է:

*Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (այսուհետ՝ ՁԻԱՀ)*՝ հիվանդություն, որը զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մոտ, համարվում է ՄԻԱՎ վարակի վերջնային փուլը, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ եւ ուռուցքային հիվանդությունների նկատմամբ:

*ՄԻԱՎ-ով վարակված անձ*՝ մարդ, որի օրգանիզմում հայտնաբերվել է մարդու իմունային անբավարարության վիրուսը կամ դրա նկատմամբ առաջացած հակամարմինները: ՄԻԱՎ-ով վարակված անձը չունենալով համախտանիշի արտաքին նշաններ, հանդիսանում է վարակի աղբյուր:

*ՁԻԱՀ-ով հիվանդ*՝ մարդ, որն ունի մարդու իմունային անբավարարության վիրուսով պայմանավորված իմունային համակարգի խորը ախտահարում եւ դրա հետևանքով առաջացած ախտաբանական դրսևորումներ:»:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« *Հոդված 2.* ՁԻԱՀ-ի կանխարգելման ծառայությունը

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումն իրականացնում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաեւ առողջապահական, կրթական եւ այլ կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Հայաստանի Հանրապետության բնակչության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման եւ մոնիտորինգի նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը (այսուհետեւ՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ): ՁԻԱՀ ԿՀԿ-ի կառավարման եւ ֆինանսավորման կարգը, կառուցվածքն ու լիազորությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին):

ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների անցկացման եւ հատկացված միջոցների արդյունավետ օգտագործման համար լիազորված պետական մարմինը մշակում է պետական նպատակային ծրագիր, որը հաստատում է կառավարությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործում կարող են մասնակցություն ունենալ մարդիկ եւ կազմակերպություններ (այդ թվում նաեւ միջազգային), բարեգործական գործունեությամբ զբաղվող մասնավոր անձինք (ներառյալ այլ երկրների քաղաքացիներ), եթե նրանց գործունեությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:»:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածում

ա) ե) կետի վերջում ավելացնել «այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը վերաբերող թեմատիկ հարցերը կրթական ծրագրերում ընդգրկելու միջոցով» բառերը:

բ) լրացնել նոր հետևյալ թ) ժ) կետերով.

«թ) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ ձեռնարկվող միջգերատեսչական միջոցառումները՝ ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ պետական ծրագրի շրջանակներում:

ժ) ապահովում է ՄԻԱՎ վարակի հայտնաբերման մատչելիությունը, այդ թվում նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտությունը, որը զուգորդվում է նախաթեստային եւ հետթեստային խորհրդատվության տրամադրման հետ: Նախաթեստային եւ հետթեստային խորհրդատվության տրամադրման կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը»:

**Հոդված 4.** Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ՄԻԱՎ-ով վարակված անձանց բուժման եւ սոցիալական պաշտպանվածության ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին»:

**Հոդված 5.** Օրենքի 7-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 6.** Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 8.** ՄԻԱՎ-ով վարակված օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց բուժումը

ՄԻԱՎ-ով վարակված օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք բուժման նպատակով մուտք են գործում Հայաստանի Հանրապետություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի»:

**Հոդված 7.** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել նոր մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունը զուգորդվում է նախաթեստային եւ ետթեստային խորհրդատվությամբ:

Մինչեւ 14 տարեկան երեխաների հետազոտությունը կատարվում է նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով կամ համաձայնությամբ, իսկ 14-18 տարեկան դեռահասներինը՝ նրանց կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով կամ համաձայնությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

**Հոդված 8.** Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« **Հոդված 11.** ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ենթակա խմբերը

1. Պարտադիր բժշկական խորհրդատվության եւ հետազոտության ենթակա են՝

ա) արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների եւ օրգանների դոնորները.

բ) հղի կանայք,

գ) ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաները:

2. Բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն եւ հետազոտություն տրամադրվում է՝

ա) սեռավարակներ ունեցող անձանց,

բ) թմրամոլներին,

գ) ազատազրկման վայրերում գտնվողներին:

3. Բնակչության բոլոր խմբերն իրավունք ունեն ստանալ ՄԻԱՎ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն եւ հետազոտություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը սահմանում է սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված խորհրդատվության եւ հետազոտության կարգերը:»:

**Հոդված 9.** Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Առողջապահական կազմակերպությունները պարտավոր են ապահովել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնող, ՄԻԱՎ-ով վարակված անձանց, ինչպես նաեւ բուժաշխատողների պարտականությունների կատարման համար անվտանգության անհրաժեշտ միջոցները եւ պայմանները՝ կառավարության կողմից սահմանված կարգով:»:

**Հոդված 11.** Օրենքի 15-րդ հոդվածի առաջին պարբերության «մինչեւ 16 տարեկան» բառերը փոխարինել «մինչեւ 18 տարեկան» բառերով:

**Հոդված 12.** Օրենքի 16-րդ հոդվածում «պահպանել» բառը փոխարինել «խրականացնել» բառով:

**Հոդված 13.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող իննսուներորդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին:**

Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի՝ ՁԻԱՀ-ի խնդիրը շուրջ 20 տարի է ինչ անհանգստացնում է մարդկությանը: Այդ համաճարակն այսօր ձեռք է բերել գլոբալ ճգնաժամի բնույթ եւ նրա տարածումը լուրջ խնդիր է ողջ աշխարհում: Վերջին տարիների ընթացքում այն ընդգրկել է մարդկային հասարակության սպասվածից ավելի լայն շերտեր, լինելով տարաբնույթ, ազդեցություն ունեցել մարդկային գործունեության գրեթե

բոլոր ոլորտների վրա, արտացոլվել միջազգային հարաբերությունների զարգացման մի շարք գործոններում:

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման, ախտորոշման եւ հսկողության իրականացման կարգը, ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները սահմանում է «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է **1997թ.** փետրվարի **3-ին**: Սակայն սույն օրենքը չի համապատասխանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ տարվող պայքարի արդի պայմաններին եւ այդ պատճառով մշակվել է նախագիծ, որի նպատակն է իրավական դաշտի հետագա բարեփոխումների ամրապնդման շնորհիվ, ինչպես նաեւ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ասպարեզում լայնածավալ եւ կայուն կրթական աշխատանքների միջոցով կանխարգելել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի հետագա տարածումը, պաշտպանել մարդու ազատությունը, նրա արժանապատվությունը եւ իրավունքները:

Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած համարել օրենքի **7-րդ** հոդվածը եւ վերաշարադրել **8-րդ** հոդվածը, որոնք սահմանում են օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց` Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու պայմանները եւ նրանց օրգանիզմում ՄԻԱՎ-ի հայտնաբերման հետեւանքները:

**25.12.2006** թվականին ՀՀ ԱԺ-ի կողմից արդեն իսկ ընդունվել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է վերոնշյալ հարցերը: Օրենքի **8-րդ** հոդվածը սահմանում է օտարերկրացիներին մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն` նման հիվանդությունը բուժելու նպատակով: Ըստ սույն օրենքի այդ վարակիչ հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նախագծով առաջարկվում է նաեւ օրենքում սահմանել այն հետազոտության խմբերը, որոնք պետք է ենթարկվեն պարտադիր հետազոտության` ելնելով միջազգային պահանջներից եւ հանրային առողջապահության հիմնավորումներից, միեւնույն ժամանակ սահմանելով բուժաշխատողների կողմից խոցելի խմբերի կամավոր հետազոտությունների անհրաժեշտությունը: